









ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԶՈՐԱՆՈՑ՝ ԱՉԱՋՐՈՒՄ

Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղում...

ԿԱՐԿՏԻ ԱՌԱՋԱՑՐԱԾ ՎԵՄՆԵՐԸ

Օգոստոսի 7-ի Բերդ խոշորացված համայնքի բնակավայրերում Բերդ քաղաքում...

ՄՈՑԻՎԼԱԿԱՆ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Եթե անձը ձեռք է բերել կենսաթոշակի անցնելու իրավունք, ապա առաջին հերթին դեմ է նախադասության կենսաթոշակ նախապայման համար անհրաժեշտ փաստաթղթերը...



- 1) դիմումը,
2) անձը հաստատող փաստաթուղթը,
3) հանրային ծառայությունների համարակիցը,
4) աշխատանքային ստաժը հաստատող փաստաթուղթը...

լու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում,
3) 18 տարեկան եւ դրանից բարձր տարիքի հաշմանդամության պատճառով մանկուց հիվանդությունն է...

կենսաթոշակի իրավունք ունեցող, երկու ծնողին կամ միակ ծնողին կորցրած երեխայի խնամքով ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) եւ չի աշխատում:

ՏՐԱՍԿՐՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ

ՄԱՐԴԻԿ ՀԱՎԱՔՐՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԻՐԵՐԸ

Արցախի Քառաբաղի Երջանի Աղավնոյի, Ներքին Մուսի եւ Բերձորի բնակիչները մինչեւ օգոստոսի 25-ը դեմ է հեռանալու գյուղից: Այս մասին գյուղի բնակիչներին օգոստոսի 5-ին զգուցարել է Արցախի սահմանապահ կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանումյանը: ArmLur.am-ը գրուցեց Բերձոր համայնքի ղեկավար Նարեկ Ալեքսանյանի հետ եւ հետաքրքրվեց, թե ինչ է կատարվում այս օրերին Բերձորում:

մեմատ, մեղմվել է, բոլորն էլ գիտակցում են, որ...
-Լուռ համակերպվել են...
-Հա... Ամեն մեկն իր համար է՝ իրերը դասավորելով, իր հարմար ինչ-որ վայրում բնակարան նայելով...

տեղափոխվելու, ինքն իր ձեռով հարմար տարբերակ գտել է՝ կլինի իր բարեկամի տրանսպորտային միջոցը կամ հենց իրեն: Ես վստահ եմ, որ այդ խնդրի հետ առնչվելու ենք, ոնց որ առնչվեցինք 44-օրյա պատերազմից հետո:
-Իսկ Արցախի կառավարությունն ինչ է անում: Որեւէ կերպ աջակցում է:
-Բնականաբար, կառավարությունն աջակցել է Կարմիր խաչի միջոցով էական չէ, թե ինչ կազմակերպության միջոցով... Ֆինանսական աջակցություն է տրամադրվել: Նաեւ տրամադրվել են բեռնափոխադրում իրականացնող անհատների տվյալներ, որոնք ունեն տրանսպորտային միջոցներ եւ կարող են տեղափոխել:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 42 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 60-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:







ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ ժամկետում զնված աղբյուրը կարող է վերադարձվել կամ փոխարինվել: Դիանա Մինասյան (54 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Սպառողն իրավունք ունի փոխարինելու կամ վերադարձնելու պատշաճ որակի ապրանքն իրեն հանձնելու օրվանից 14 օրվա ընթացքում, եթե վաճառողն ավելի երկար ժամկետ չի հայտարարել: Պատշաճ որակի ապրանքը վերադարձնելու ժամկետը համարվում է պահպանված, եթե սպառողն ապրանքը ստանալու օրվանից 14-օրյա ժամկետում այն հանձնել է փոստային, սուրհանդակային, տրանսպորտային կամ առաքման այլ ծառայության:

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է սպառողին հայտնել իր կազմակերպության անվանումը (ֆիրմային անվանումը), գտնվելու վայրն ու աշխատանքային ռեժիմը: Արտադրողը (կատարողը, վաճառողը) այդ տեղեկատվությունը պետք է զետեղի ցուցանակի վրա: Ցուցանակին ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը: Արտադրողը (կատարողը, վաճառողը) պետք է նաև սպառողին ներկայացնի տեղեկատվություն՝ պետական գրանցման, ինչպես նաև, եթե արտադրողի (կատարողի, վաճառողի) գործունեության տեսակը (տեսակները) ենթակա է լիցենզավորման՝ լիցենզիայի համարի, դրա գործողության ժամկետի և այդ լիցենզիան տվող մարմնի մասին: Նախատեսված տեղեկատվությունը պետք է հասցվի սպառողներին ի գիտություն նաև ժամանակավոր շինություններում, սպառողական ապրանքների շուկաներում, տոնավաճառներում՝ շրջիկ կետերի և շրջածախ առևտրի միջոցներով վաճառքի, սպառողների կենցաղային և այլ տիպի սպասարկումների իրականացման ժամանակ և այլ դեպքերում, եթե առևտուրը, սպառողների կենցաղային և այլ տիպի սպասարկումներն իրականացվում են վաճառողի (կատարողի) գտնվելու մշտական վայրից դուրս:

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՅՈՎՅԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Թանկարժեք մեքանիկայից դատարանում, քանկարժեք մեքանիկայում դատարանում կամ քանկարժեք մեքանիկայից դրվագազարդերով զարդարված ուր աղբյուրները դատարանի հարգադրումն ենթակա չեն:

Գոհար Աղաբեկյան (44 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Պարտադիր հարգադրոջման ենթակա չեն՝ ա) թանկարժեք մետաղներից պատրաստված պատմական կամ հնագիտական արժեք ներկայացնող իրերը, ինչպես նաև մետաղադրամները, շքանշաններն ու մեդալները, բ) գիտական, բժշկական, արտադրական և այլ հատուկ նպատակների համար թանկարժեք մետաղներից պատրաստված գործիքները, սարքերը, լաբորատոր սպասքը, գ) զենքի, կենցաղի, կրոնական ծիսակատարությունների համար հոգեւորականների կողմից կիրառվող և նման այլ առարկաների վրա թանկարժեք մետաղներով արված դրվագազարդերը, դ) մինչև 1,5 գրամ կշիռ ունեցող թանկարժեք մետաղներից պատրաստված իրերը, ընդ որում՝ արծաթից պատրաստված մինչև 3 գրամ կշիռ ունեցող իրերը, ե) թանկարժեք մետաղներից պատրաստված նրբաշիյուս իրերը, որոնք հնարավոր չէ դրոշմել, զ) հետագա մշակման ենթակա նախապատրաստվածները և բոլոր այն անավարտ իրերը, որոնց վրա դեռևս կավելացվեն թանկարժեք մետաղներից և (կամ) այլ մասեր, ինչպես նաև նրբաթերթ թանկարժեք մետաղները, արտադրական ձուլվածքները, թափոնը և ջարդոնը:

Շուկայի վերահսկողական տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերն ստացողին հանձնելիս դիմում-անդորրագրի առաջին և երկրորդ օրինակների հակառակ կողմում դրվում է դրոշմ (կամ մակագրվում է)՝ «Արժեքները հանձնված են», որից հետո անդորրագրի առաջին օրինակը վերադարձվում է իրերը ստացողին: Իրերը վերադարձնելիս դիմում-անդորրագրերին կցված բոլոր փաստաթղթերի վրա (լիազորագիր, անվանացանկ և այլն) պետք է դրվի դրոշմ կամ մակագրվի՝ «Արժեքները հանձնված են»:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Տեղեկությունների համաձայն՝ Մյասիկյան պողոտայի 5/3 հասցեի դիմաց՝ «Սուվենիր» ռեստորանային համալիրի մոտ, կրակոցներ են հնչել, ինչի հետևանքով 1 պարկուճ դիպել է կայանված Mercedes մակնիշի ավտոմեքենայի դիմապակուն, որը չի վնասվել: Բարեբախտաբար, տուժածներ չկան:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), և մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

Subscription form with fields for name, address, phone, and a contact number (060) 490049.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետևյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ.՝ 010 54-64-23 Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086 տրված է 24.11.2010 Ստորագրված է տպագրության 15.08.2022

Գլխավոր խմբագիր՝ ԶԵՆՈՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: